

**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՓԱԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅՈՒՆ» ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ծրագրի նպատակն էր «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» ծրագրի շրջանակներում 2017 թվականին իրականացված աշխատանքների ամփոփումը:

Ծրագիրն իրականացվեց 2017 թվականի դեկտեմբերի 28-ին Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Չարենցավան քաղաքում: Ծրագրին մասնակցելու նպատակով Երևանից Չարենցավան մեկնեցին Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության և «Երիտասարդական միջոցառումների իրականացման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության աշխատակիցները: Փակման արարողությանը մասնակցեցին Հայաստանի Հանրապետության 2018 թվականի երիտասարդական մայրաքաղաք Տավուշի մարզի Իջևան քաղաքի պատվիրակությունը, ինչպես նաև Չարենցավանի երիտասարդական հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներ ու երիտասարդներ: Չարենցավանի երաժշտական դպրոցի դահլիճում կայացավ Հայաստանի Հանրապետության 2017 թվականի երիտասարդական մայրաքաղաքի փակման պաշտոնական արարողությունը: Շնորհակալագրեր հանձնվեցին Չարենցավանի քաղաքապետարանի երիտասարդական ոլորտի աշխատակիցներին և Չարենցավան քաղաքի երիտասարդական հասարակական կազմակերպությունների այն ներկայացուցիչներին, որոնք 2017 թվականին «Հայաստանի Հանրապետության տարվա երիտասարդական մայրաքաղաք» մրցույթի շրջանակներում սերտ համագործակցել են Նախարարության հետ և ծավալել առավել ակտիվ գործունեություն: Միջոցառումը շարունակվեց հաշվետու տեսաֆիլմի դիտումով, որում ներկայացվեցին հատվածներ բոլոր այն միջոցառումներից ու ծրագրերից, որոնք 2017 թվականին իրականացվել են Հայաստանի Հանրապետության 2017 թվականի երիտասարդական մայրաքաղաքում: Այնուհետև Չարենցավանի քաղաքապետի տեղակալը երիտասարդական մայրաքաղաքի բանալին պաշտոնապես հանձնի Իջևանի քաղաքապետի տեղակալին: Ծրագրի բոլոր մասնակիցներին բաժանվեցին ամփոփիչ գրքույկներ: Այս ամենին հաջորդեց համերգային միջոցառում՝ Հայ մյուզիք բենդի, Ադանա պրոջեքթի, Սոնա Շահգելոյանի և Չարենցավանի համույթների մասնակցությամբ:

Ծրագրի լուսաբանումը՝

<http://www.erit.am/news/hy/79981>

<http://www.erit.am/news/hy/79982>

Ծրագրի ֆինանսական կատարողական

N	Անվանումը	Նախահաշիվ	Կատարողական
1.	Փակման արարողության միջոցառման կազմակերպում	6 500 000	6 250 000
	ԸՆԴԱՄԵՆԸ	6 500 000	6 250 000

**«ԵՐԻՏԱԱՐԴԱԿԱՆ ՊՈՐՏԱԼԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ ԵՎ ԶԱՐԳԱՑՈՒՄ» ԾՐԱԳՐԻ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ**

Ծրագրի նպատակն էր՝ երիտասարդության գործունեության տարբեր ոլորտների վերաբերյալ հավաքել տեղեկատվություն, մշակել ու www.erit.am կայքի միջոցով տարածել հասարակության, մասնավորապես՝ երիտասարդության շրջանում, ապահովել www.cragrer.am առցանց դրամաշնորհային համակարգի անխափան աշխատանքը, խթանել երիտասարդության ոլորտում գործունեություն ծավալող հասարակական կազմակերպությունների գործունեությունը: Ծրագիրը ավարտվեց 2017 թվականի դեկտեմբերի 28-ին: Նշված ժամկետում կատարվեցին պորտալի վեց հիմնական բաժինների պարբերական թարմացում, տեխնիկական աշխատանքների վերահսկողություն և ապահովում: Այդ թվում՝

1. «Երիտասարդ. Նորություններ» բաժնում

- 1) «Նորություններ»՝ 1005 նորություն
- 2) «Վերլուծություն»՝ 16 վերլուծական հոդված
- 3) «Հարցազրույց»՝ 54 հարցազրույց
- 4) «Պատկերասրահ»՝ 215 միջոցառման լուսանկարներ
- 5) «Հայտարարություններ»՝ 63 հայտարարություն

2 «Երիտասարդ. Ծրագրեր»

Նախարարության երիտասարդական պետական քաղաքականության շրջանակներում գործող առցանց դրամաշնորհային համակարգի ադմինիստրատիվ և գործաձողների ինտերֆեյսի բարելավման աշխատանքների ծրագրում և իրագործում: Համակարգի միջոցով դիմած հասարակական կազմակերպությունների և ծրագրերի վիճակագրության վարում: Դրամաշնորհային հայտարարությունների տեղադրում, ծրագրերի ընդունման անխափան աշխատանքի ապահովում, հայտերի փորձագիտական գնահատման տրամադրում, տվյալների հավաքում, վիճակագրության կազմում և սահմանված ժամկետներում ներկայացում ԵՄԻԿ ՊՈԱԿ: Դիմած ու գնահատված ծրագրերի և կատարված փորձագիտությունների վերաբերյալ ամփոփ վերլուծական տեղեկատվության տրամադրման ապահովում: Համակարգում տվյալների որոնման, ֆիլտրացիայի և դուրսբերման գործիքների լրամշակում և բարելավում: Գրանցման դիմումի և գնահատման ձևերում ուղղորդումների և հուշումների համակարգի կիրարկում: Գրանցման, դիմումի և գնահատման ձևերում փոփոխությունների կատարում՝ ըստ նախորդ փուլի արձագանքների և առաջացած խնդիրների: Նախորդ թեստային փուլին մասնակցած գործաձողների (դիմող կազմակերպություններ, փորձագետներ, ադմինիստրատորներ) հետ համատեղ բացահայտված թերացումների համակարգում, լուծումների մշակում և տեխնիկական կատարում, տեխնիկական ընթացիկ բոլոր թերությունների վերացում:

3. «Երիտասարդ. Աշխատանք»

Նոր աշխատատեղերի ավելացման նպատակով գործատուների հետ հետադարձ կապի պահպանում, գրանցված նոր կազմակերպությունների և ստեղծված աշխատատեղերի պարբերական ակտիվացում և հաստատում: Աշխատանք որոնող երիտասարդների էջերի պարբերական մոնիտորինգի իրականացում: “Php MySQL” ծրագրով ստեղծված cms-ի վարում: Բացահայտված թերացումների համակարգում, լուծումների մշակում և տեխնիկական կատարում, տեխնիկական ընթացիկ բոլոր թերությունների վերացում: Էլեկտրոնային փոստով ստացված նամակների օպերատիվ հետադարձ կապի ապահովում:

4. «Երիտասարդ. Տեղեկատու»

Գրանցված կազմակերպությունների և փորձագետների էջերի ստուգում և հաստատում: Տարածքային կոորդինատների թարմացում: Նոր կազմակերպությունների և փորձագետների ներգրավում տեղեկատվական բազա: “Php MySQL” ծրագրով ստեղծված cms-ի վարում: Բացահայտված թերացումների համակարգում, լուծումների մշակում և տեխնիկական կատարում, տեխնիկական ընթացիկ բոլոր թերությունների վերացում: Էլեկտրոնային փոստով ստացված նամակների օպերատիվ հետադարձ կապի ապահովում: 100 կազմակերպության և 50 փորձագետի գրանցում:

5. «Երիտասարդ. Գրադարան»

Նոր փաստաթղթերի, ուսումնասիրությունների և նյութերի վերբեռնում: Գրադարանի բովանդակության շարունակական մոնիտորինգ և հարստացում: Գրադարանի նյութերի հանրայնացում և հաճախելիության բարձրացում: Տարբեր տեղական և միջազգային երիտասարդական կազմակերպությունների և հրատարակությունների հետ հետադարձ կապ՝ նոր նյութերի հայթայթման և տեղադրման նպատակով: “Php MySQL” ծրագրով ստեղծված cms-ի վարում: 30 գրքի և ձեռնարկի տեղադրում:

6. «Երիտասարդ. Առողջ ապրելակերպ»

Նյութերի և իրադարձությունների պարբերական թարմացում: Սոցիալական ցանցերի շարունակական մոնիտորինգ՝ նոր իրադարձությունների հայտնաբերման նպատակով: Բաժնի սպասարկման ժամանակահատվածում հիմնական բաժինները թարմացվեցին 30 նյութերով և իրադարձություններով: “Php MySQL” ծրագրով ստեղծված cms-ի վարում:

Ապահովվեց պորտալի տեղակայման վիրտուալ սերվերը և աշխատանքի դոմեյնները. այդ թվում՝ հասանելիություն հայկական ցանցերին մինչև 1 գրիթ/վրկ արագությամբ, ՕՀ-ի անվճար տեղադրում, 24/7 տեխնիկական աջակցություն, իրական IP հասցե/ենթացանց, էլեկտրոնային փոստով հիշեցում ծառայության ժամկետի ավարտի մասին, թողունակությունը մինչև 100Mbit/s, պրոցեսորը (CPU)՝ 2 հատ, օպերատիվ հիշողությունը (RAM 4 GB), հիմնական հիշողությունը (HDD 100 GB), սերվերի 24 ժամյա օպերատիվ սպասարկում, պորտալի տեղակայման 4 դոմեյնների տարեկան վարձակալություն:

Կայքը՝

- <http://www.erit.am>
- <http://www.youth.am>
- <http://www.eritasard.am>
- <http://www.youtharmenia.am>
- <http://www.cragrer.am>
- <http://www.youthweb.am>

Ծրագրի ֆինանսական կատարողական

N	Անվանումը	Նախահաշիվ	Կատարողական
1.	Կայքի վեց հիմնական բաժինների պարբերական թարմացումներ և տեխնիկական աշխատանքի վերահսկողություն և ապահովում:	16 540 000	16 500 000
2.	Պորտալի տեղակայման վիրտուալ սերվերի ապահովում	729 600	729 600
3.	Պորտալի տեղակայման դոմեյնների ապահովում.	60 000	48 000
ԸՆԴԱՄԵՆԸ		17 329 600	17 277 600